



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

<< 25 >> հուլիսի 2014թ. N 199-ՉԿ

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության <<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցութային հանձնաժողովի 2014թվականի հուլիսի 22-ի N 4 որոշումը, Ն. Հարությունյանի (2014 թվականի հուլիսի 22-ի մտ. N 3-1485) անձնական դիմումը, 2014թվականի հուլիսի 25-ին կնքված N 62 աշխատանքային պայմանագիրը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Նորայր Հարությունյանին 2014 թվականի հուլիսի 25-ից նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության <<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

3. Ն. Հարությունյանին և Ս. Համբարձումյանին՝ սահմանված կարգով կատարել հանձնման-ընդունման աշխատանքները:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Փիրումյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ